

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 06.04.2021թ. թիվ 2112518210 որոշումն անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման թողնելու մասին

<< 28 >> 04 2021թ. 7-13- 6840

ք.Երևան

Ճանապարհային ոստիկանության պետ, ոստիկանության գնդապետ Ե.Կարապետյանս, վերանայելով Լևոն Նալբանդյանի ՄԴ/34814-21 դիմումի քննարկման արդյունքում ստեղծված նյութերը՝

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Օգանովի փողոցի 40 շենքի 5 բնակարանի բնակիչ Լևոն Նալբանդյանը դիմումով խնդրել է վերանայել Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 06.04.2021թ. թիվ 2112518210 որոշումը՝ նշելով, որ կանգառը կատարել է հարկադրված՝ մեքենայի անսարքության պատճառով:

Դիմումի քննարկման արդյունքում պարզվել է, որ դիմումատուին վարչական պատասխանատվության ենթարկելու մասին 06.04.2021թ. թիվ 2112518210 որոշումն ենթակա է կատարման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

<<Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին>> օրենքի 3-րդ հադվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական վարույթի իրավախախտման հատկանիշների պարզման փուլում իրավախախտումը հիմնավորող ապացույցը իրավախախտումն ամրագրած տեսանյութն է կամ լուսանկարը, որը պարունակում է նաև տեխնիկական միջոցով արձանագրված տվյալները: Ըստ նույն հոդվածի 2-րդ մասի՝ որպես իրավախախտումը հիմնավորող ապացույց վարչական կամ դատական կարգով բողոքարկման վարույթում կարող են օգտագործվել վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 251-րդ հոդվածով նախատեսված ապացույցները:

<< կառավարության <<Ճանապարհային երթևեկության կանոնները և տրանսպորտային միջոցների շահագործումն արգելող անսարքությունների ու պայմանների ցանկը սահմանելու մասին>> 28.06.2007թ. թիվ 955-Ն որոշման համաձայն՝ 3.16, 3.20, 3.22, 3.24 և 3.26 - 3.30 նշանների ազդեցությունը տարածվում է՝ նշանի տեղադրման տեղից մինչև դրանից հետո գտնվող մոտակա խաչմերուկը, իսկ բնակավայրերում, խաչմերուկի բացակայության դեպքում, մինչև բնակավայրի վերջը: Նշանների ազդեցությունը չի ընդհատվում հետադարձի և բաժանարար գոտու խզման, ինչպես նաև ճանապարհներին մերձակա տարածքներից ելքի և դաշտային, անտառային և այլ երկրորդական ճանապարհների հատման (հարման) տեղերում, եթե դրանցից առաջ համապատասխան նշաններ տեղադրված չեն:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ << օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ տրանսպորտային միջոցների վարորդների կողմից ճանապարհային նշանների կամ ճանապարհային գծանշումների պահանջները չկատարելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հնգապատիկի չափով:

Նույն օրենսգրքի 124-րդ հոդվածի 36-րդ մասի համաձայն՝ ճանապարհային նշանների պահանջները չկատարելու համար սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված վարչական իրավախախտումն ունի նվազ նշանակություն այն դեպքում, երբ իրավախախտումն անխուսափելիորեն կատարվել է երթևեկության այլ մասնակցի գործողության կամ անգործության պատճառով:

Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 06.04.2021թ. թիվ 2112518210 որոշումամբ իրավախախտումն ամրագրած տեսանյութը փաստում է որ դիմումատուին պատկանող տրանսպորտային միջոցը 18.03.2021թ. ժամը 13:53-ին կանգառ է կատարել Երևան քաղաքի Հ.Քոչար – Բաղրամյան - Կիևյան - Հ.Հակոբյան – Կասյան փողոցների՝ խաչմերուկի հատվածում մասնավորապես իրավախախտումը կատարած վայրում ՀՀ կառավարության 28.06.2007թ. թիվ 955-Ն որոշմամբ սահմանված 3.27 «<Կանգառն արգելվում է>> ճանապարհային նշանի ազդման գոտում, որը չի կատարվել երթևեկության այլ մասնակցի գործողության կամ անգործության պատճառով:

Ինչ վերաբերվում է հարկադրված կանգառ կատարելու հանգամանքին, ապա ՀՀ կառավարության «Ճանապարհային երթևեկության կանոնները և տրանսպորտային միջոցների շահագործումն արգելող անսարքությունների ու պայմանների ցանկը սահմանելու մասին»>> 28.06.2007թ. թիվ 955-Ն որոշման 22-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ «<Վթարային լուսային ազդանշանը պետք է միացված լինի՝ կանգառն արգելված տեղերում հարկադրված կանգառի դեպքում>>, իսկ նույն որոշման 23-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ «<Վթարային լուսային ազդանշանը միացնելուց հետո (ինչպես նաև, երբ այն անսարք է կամ բացակայում է) անհապաղ պետք է տեղադրվի «Վթարային կանգառ» ճանաչման նշանը (թարթող կարմիր լապտերիկ)՝ կանգառն արգելված տեղերում հարկադրված կանգառի դեպքում>>:

Նույն որոշման 83-րդ կետի համաձայն կանգառն արգելված վայրում հարկադրված կանգառ կատարելու դեպքում կանոնների 22-րդ և 23-րդ կետերի պահանջները կատարելուց հետո վարորդը պետք է ձեռնարկի բոլոր անհրաժեշտ միջոցները՝ տրանսպորտային միջոցն այդ վայրից դուրս բերելու համար:

Ավելին, «<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> օրենքի 43-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե նույն հոդվածի 1-ին մասի «բ» կետով նախատեսված դեպքում վարչական մարմնի կողմից քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ տվյալներին (տեղեկություններին) վարչական մարմինը կարող է իրազեկ դառնալ բացառապես տվյալ անձի միջոցով, ապա ապացուցման պարտականությունը դրվում է այդ անձի վրա, իսկ դիմումին կից չի ներկայացվել որևէ փաստ, որը կապացուցեր տրանսպորտային միջոցի կանգառը հարկադրված լինելու հանգամանքը:

Ելնելով վերոգրյալից, նկատի ունենալով, որ վերը նշված իրավանորմի համաձայն դիմումատուի կողմից չեն ներկայացվել իր համար բարենպաստ փաստական հանգամանքների առկայության վերաբերյալ ապացույցներ և ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 293-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 06.04.2021թ. թիվ 2112518210 որոշումը թողնել անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հանձնելու օրվան հաջորդող օրը և կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:
3. Սույն որոշման օրինակն ուղարկել Լևոն Նալբանդյանին:

